ԷՋՄԻԱԾՆԻ ՄՈՑՐ ՏՈՀՄԸ ՌՈՒՍ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ՕՐՈԳՐԵՐՈՒՄ



Պատմությունն ապացուցեց, թե հիշտ են Գրիգորիի Էնդելսի խոսքերն այն մասին, որ «Ռուսաստանն իրապես առաջավոր դեր է տանում Արևելքի նկատմամբ։ Շնորհիվ ռուսական բանակի փառապանծ հաղթանակի, անցյալ դարի քսանական թվականներին Արևելյան Հայաստանն ազատագրվեց դարավոր լծից և բազմաչարչար հայ ժողովուրդը փրկվեց բնաջնջման վտանգից։ Նրա առջև բացվեցին կուլտուրական վերածնման նոր, լայն հորիզոններ։

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներից հետո Ռուսաստանը հնարավորություն ստացավ անմիջապես շփվելու հայ ժողովրդի հետ և մոտիկից ծանոթանալու նրա կյանքին ու կենցաղին, նրա պատմական անցյալին ու կուլտուրական հարստություններին։

1820 — 1840-ական թվականներին շատ ռուս մարդիկ եղան Հայաստանում, որոնց թվում՝ ռազմական գործիչներ, գրողներ, պաշտոնակատարներ ու հանրապարհորդներ։ Նրանցից շատերը հանդես եկան ռուս պարբերական մամուլում իրենց տպավորություններով, օրագրերով և հոդվածներով։

Առաջին աղեղով և լուսեղ անուն, որ պետք է հիշենք, այդ Ալեքսանդր Գրիբոյեդովն է։ Նա ռուս գրողներից առաջինն էր, որ 1818—1819 թվականներին այցելեց Հայաստան։ Երբ նա դեռ տնքում էր պարսկական բռնապետության տակ։ Երևք որ նա հյուր եղավ «Հայկական մայրաքաղաք»-ում՝ Երևանում։ Մի քանի տարի անց, երբ սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, Գրիբոյեդովը կրկին մեկնեց Կովկաս, այս անգամ ևս որպես ռուս պետության դիվանագիտական գործիչ։ 1827 թվի հունիսի 6-ին բացվեց նրա առջև ասնման Արարատը։ Իր անարատ դեղեցկությամբ ու վեհությամբ։ Գրիբոյեդովը լրջում էր Արարատի ափերին, հիանալով գաշտերի «վառ կանաչով» ու սառնորակ աղբյուրներով։ Նույն թվի հունիսի 8-ին նա այցելեց Էջմիածին և ներկա եղավ հանդիսավոր ծիսակատարությանը ռուս բանակի հաղթանակի և Արևելյան Հայաստանի ազատագրման առթիվ։ Գրիբոյեդովը նշում է օրագրում՝ «Թանասեղծական երեկոն Էջմիածնի սրահում։ Պատուհանից լուսավորում է լուսինը։ Դանդաղ շրջում է վանահայրը սովերի նման...»։

Գրիբոյեդովի հանապարհորդական դիտողությունները ցույց են տալիս, թե ինչպես Հայաստանի տեսարանները հարստացրին նրա բանաստեղծական դիտակցությունը նոր վառ տպավորություններով։

Գրիբոյեդովից հետո, ռուս գրքերի հետ միասին Հայաստանում եղան պոետ-պարտիզան Դենիս Դավիդովը, որը գովերգեց լուսնի լույսով ողողված, կապույտ մշուշում անդորրության մեջ նիրհող հեռավոր սարերն ու դաշտերը, և ռուս ժողովրդի մեծագույն բանաստեղծ Պուշկինը։ Պատերազմի պատճառով նրանց չհաջողվեց լինել Էջմիածնում։

Երբ ռուս պաշտոնական մամուլը մեղադրեց Պուշկինին, որ իբր նա հայրենասեր չէ, որովհետև լքովերգեց ռուս բանակի հաղթանակները, այն ժամանակ բանաստեղծն իր «հանապարհորդություն դեպի Էրզրում» գրվածքի առաջաբանում, պատասխանելով այդ մեղադրանքներին, ասում է, որ նա բոլորովին պարտական չէ գրելու պ. պ. ժուռնալիստների պատվերով։ Այստեղ Պուշկինը հիշում է երկու ռուս գրողների անունները, որոնք նույն տարիներին եղել են Կովկասում։ Նրանցից մեկը՝ Ալեքսանդր Մուրավյովը 1848 թվին Պետերբուրգում հրատարակեց մի ընդարձակաշխատություն «Վրաստան և Հայաստան» խորագրով, որի բովանդակությունն են կազմում հեղինակի ճանապարհորդական տպավորություններն ու նրա գաղտնությունները կրոնական հարցերի շուրջը։ Երկրորդ հատորում, որն ամբողջապես նվիրված է Հայաստանին, մի փոքրիկ գլուխ հատկացված է Էջմիածնին, որտեղ մանրամասնորեն նկարագրված են Մայր Տաճարը, Գայանեի, Հռիփսիմեի և Շողակաթի վանքերը։

Եթե Մուրավյովին հետաքրքրել են հայ ժողովրդի անցյալը, պատմական հուշարձանները, ապա այլ նպատակով է ժամանել Հայաստան կնյազ Ա. Սալդիկովը։ Ռուս ազնվականի ուշադրությանն ավելի արժանի են թվացել տեղական անծանոթ կերակուրները։ Նա հաճույքով նկարագրում է իր ճաշը կաթողիկոսի մոտ, ինչպես իրեն վանքում հյուրասիրել են «այծի պանիրով, գոմեշի կայմակով, տկի գինով և այլ համեղ կերակուրներով»։

Այլ բնույթ ունեն ռուս պաշտոնակատար Ն. Նեֆիդյևի հիշողությունները, որը 1830-ական թվականների վերջերին հանդես եկավ ռուս մամուլում Հայաստանին նվիրված հատուկ գրքույկով։ «Խորին ակնածությամբ ես մտա էջմիածնի Տաճարը,— գրում է նա։— ... Աղոտ լույսը, թափանցելով գմբեթի նեղ պատուհաններից (գունավոր ապակիներով) հաղորդում է բոլոր առարկաներին սրբազան խորհրդավորություն. ամենուրեք կախված արծաթե ջահերը, ինչպես լույս աստղեր երկնի մութ հորիզոնում, փայլում են կամարների կիսախավարում...»։ Նեֆիդյևը մանրամասն նկարագրում է էջմիածնի Տաճարի թե՛ արտաքին և թե՛ ներքին տեսքը։ Նա անկեղծորեն և մեծ ոգևորությամբ պատմում է իր հայրենակիցներին այն «ուժեղ տպավորության» մասին, որ թողել է նրա վրա քրիստոնեական ճարտարապետության այդ հնագույն հուշարձաններից մեկը։

Մայր Աթոռի ներսի նկարազարդության մասին ավելի մանրամասն տեղեկություններ տալիս է մեկ ուրիշ ռուս անհայտ հեղինակ, որը 1848 թվին ռուս պարբերական մամուլում հանդես եկավ ընդարձակ մի հոդվածով, տարօրինակ վերնագրով՝ «Հանգուցյալի տպավորություններն ու հիշողությունները»։ Վերնագիրը, հավանաբար, կապված է այն հանգամանքի հետ, որ հոդվածի հիմնական բովանդակությունն են կազմում պատերազմական տարիների արհավիրքները և մի ռազմական բժշկի տխուր կյանքը, որը համառորեն պայքարելով ժանտախտի դեմ, ինքն ևս զոհ է դնացել այդ տսկալի հիվանդության։ Ինչպես կարելի է եզրակացնել այդ հիշողությունների բնույթից, հեղինակը, հավանաբար, ռուս զինվորական է, որը մասնակից է եղել 1820-ական թվականների ռազմական իրադարձություններին։ Նա ևս մի քանի էջ նվիրել է էջմիածնին։ «Տաճարի ներսը,— գրում է նա,— կամարների տակ մոայլ է. ըստ իր ներքին տեսքի նման է Կիևի Սոֆիայի տաճարին... Պատերը երեսից նկարազարդված են ֆրեսկաների տիպի նկարներով սրբազան պատմությունից։ Մութ նկարները ապացուցում են նկարչության հնությունը... Ծաղիկներով ու ֆիգուրաներով, սրբերի պատկերներով նկարազարդված պատերը և կամարները ուժեղացնում են ներսի խավարը... Գմբեթը ներսից զարդարված է արաբեսկներով, կամ վառ նկարազարդերով, ինչպես գործում են պարսկական գորգերը... Պատուհանները հատուկ վարպետությամբ պատած են գույնզգույն ապակիներով... Տաճարի ներքին ընդհանուր տեսքը վկայում է նրա խոր հնությունը...»։

Ռուս գրողներն ու ճանապարհորդները ամենայն հարգանքով ու ակնածությամբ են վերաբերվել դեպի հայ ժողովրդի պատմական հուշարձանները։ Էջմիածնում, Հայաստանի այդ հնագույն վայրում նրանք զգացել են հնամավոր, անցած դարերի շունչը։ Հայաստանը, որը դեռ ամենուրեք կարելի էր տեսնել պատերազմի թարմ հետքերը, թվացել է նրանց տխուր, ամայի մի երկիր, հարուստ՝ քանդված, ավերված քաղաքների ու վանքերի բանաստեղծական բեկորներով։

Կ. Գ.